կէին։ Ուրեմն, չափաւորութիւնը ընտանեկան կենաց հաստատուն հարստութիւնն է, անարարութիւնն ա՛ձեռագործութիւնը՝ կանանց ջրբոդպարտքը։ Ուրեմն, տան հարստութիւնը՝ կինն է, տան թագուհին՝ կինն է և օրինաւոր ընտանիքը՝ մի փոքրիկ և գեղեցիկ թագաւորութիւն է։

Ընթերք. — Այո՛, այո՛։

Լոռիպէ. — Գուցէ այդ պատճառաւ է, որ սուրբ եկեղեցին ալ, պսակի ժամանակ՝ նորափեսային՝ թագաւոր կանուանէ, իսկ նորահարսը՝ թագուհի։

Փառանիէ. — (Կը շարունակէ) — Այս կանայքը չը յիշեցին երբենց առաջին վայելչութիւնը, փափկութիւնը և ըստացուածքը. նախարարաց կանայքն անգամ սկսան ուրախութեամբ գիւղական կեանք վարել։ Ուրեմն, կինը պէտք է որ իշխէ փափկասիրութեանը և վայելչասիրութեանը. պէտք չէ որ անձնատուր ըլլայ վաղանցուկ բաներու, այլ պիտի այնպիսի կրթուած սիրտ, միտք և կամք ունենայ, որ իր ամուսնոյ, իր որդւոյ, իր ազգի և մանաւանդ Աստուծոյ սիրոյ համար կարենայ հարկի երբած ժամանակը ամէն բան ուրախութեամբ թողուլ։

Ընթերք. — Այո՛, այո՛։

Փառանիէ. — (Կը շարունակէ) — Այս կանայքը իրենց գեղեցիկ և առաքինի կեանքով քաղցրացուցին իրենց կապուած և բանարարուած ամուսիններու տառապանքները. Միսիթարեցին անոնց տրտմերը և անարատ պահպանեցին Այս գերդաստանի և Այս հայրենեաց տունը։ Ուրեմն, կինը մարդու միսիթարութիւնն է, գերդաստանի սիրնը և հայրենեաց հաստատութիւնը։ Այս այս մեծ արժանաւորութեան արմատն ալ բարի դաստիարակութեան մէջ է։ Ինչ տեղ բարի դաստիարակութիւն չը կայ՝ հոն կնոջ արժանաւորութիւնը մեռած է, և ուր մեռած է այս արժանաւորութիւնը, իմացէք որ մեռած է ամենայն ինչ։ Վասն զի ազգի մը կենդանութիւնը՝ առաքինի կանայքը կամ մայրերն են։

Ընթերք. — Այո՛, այո՛. ուրեմն առաքինի Այ կանայքն ու մայրերը միայն կրնան ըլլալ ՀԱՅՈՒԹԵԱՆ ԿԵՆԴԱՆ ՆՈՒԹԻՒՆԸ։

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ

Մայիս 17 ին, Արքոց Պայիանեանց տունին, կաստորուեցաւ քաղաքիս օրիորդաց Վարժարանին մէջ մի վայելուչ հանդէս, ուր ներկայ էին Մեծ. Արքաղան պատրիարքը և Այլ. միաբանները շատերը, նմանապէս և օրիորդաց ծնողքը։ Յառաջագէմ օրիորդներէն մէկը կարդաց մի գեղեցիկ Ճառ խոհեմութեան վրայ, յետոյ երկու փոքրահասակ օրիորդներ փոխադարձ հարցու պատասխաններով բանակոն բան պատմեցին քրիստոնէական ուսման գիտելիքներէն, և ապա քանի մի օրիորդներ համառօտ տրամախօսութիւն մը ներկայացուցին, դպրոցաց կարեւորութիւնը բացատրելով։ Այս ամենէն զինի Արքաղան Պատրիարքը ազդու և համառօտ ատենախօսութեամբ կընքեց հանդէսը, յիշեցնելով օրիորդաց ծնողներուն, որ իրենք եւս պարտաւորին իրենց դստերաց ընտանեկան կենցաղ վրայ հսկել և այս Ճանապարհաձեւ գործնական դպրոցին, որպէս զի աշակերտուհեաց ուսմունքը և վարքը հաստատուն ընթացման և արդիւնաւորին Սուրբ Աթոռոյ խնամքները։ Ծնողք շնորհակալութիւն մատուցին Արքաղան Պատրիարքին իւր հայրական խնամատարութեան համար և ապա

digitised by A.R.A.R.@

ազգային քաղաքահնչիւն երգասացութեամբ արձակեցան հանդիսականները։

—Ամսոյս 22 ին, Հայաստանեայց կաթուղիկէ եկեղեցւոյ ազգային հանդիսաւոր Տօնին, Ամեն. Սրբազան Պատրիարքը ինքնին պատարագ մատուցանելով Ճոնադրութեան Սուրբ խորհուրդ կատարեց, որով և վարդապետութեան կամ կուսակրօն քահանայութեան աստիճան շնորհեց Պ. Գաբրիէլ Մուրատեանցին և դպիր Գէորգ Գրիգորեանին, առաջնոյն անունը փոխելով Մելքիսեդեկ եւ երկրորդինը՝ Մակար։

—Ներքեղէհէմի Օննդեան այրի խնդիրը տակաւին նոյն անորոշ վիճակի մէջ է, ինչպէս Միհնի նախընթաց թուով ծանուցած ենք։

—Աղէքսանդրիայ և Ընտիոքայ Յունաց Պատրիարքները քաղաքս ժամանեցին։ Ինչպէս կ'երեւի յիշեալ Պատրիարքաց գալստեան նպատակը լուսուխտաւորութիւն չէ, այլ նպատակ ունին Լրուսաղէմի պատրիարքի հետ խորհրդակցելու ինչ ինչ եկեղեցական խնդրոց վրայ, որոց մէջ յայտնի է մանաւանդ յունադաւան Մարոնիներու խնդիրը, որոնք սկսած են արդէն քաղաքել յունական եկեղեցւոյ վարչութեան դէմ, որ փոխանակ իրենց մէջէն և իրենց լեզուն հասկացող մարդիկ առաջնորդ կարգելու, ինչպէս առաջ, այնպիսի անձինք կարգած է, որք բոլորովին խորթ կ'երեւին Մարոնիներուն։ Ը. այժմ տակաւին չենք գիտնիր Յունք՝ Մարոնիներու քաղաքը լքելու և գործադրելու, բայց տեսնենք թէ պատրիարքական խորհուրդը ինչ պիտի անօրինէ։

—Ներկայ ամսոյս մէջ քանի մի գողութիւններ եղան քաղաքիս մէջ և կրպակներ կողոպտուեցան, բայց կառավարութիւնը այնպիսի աշխուժով և խիստ միջոցներ ձեռք առաւ, որ կարճ ժամանակի մէջ թէ գողերը բռնուեցան և թէ ապահովութիւնը տիրեց քաղաքի մէջ։

ՕԳՈՒՏԱՐ ԱՌԱԼԻՒՐ

(Հաւանակութիւն, տես թիւ. 4)։

22. Գիւղացի մի իւր դրացւոյն տունը գնաց անոր էշը փոխ ուզելու համար, դրացին որ կամք չունէր տալու, պատասխան տուաւ անոր ըսելով, շատ կը ցաւիմ որ քիչ մի յառաջ չի խնդրեցիր, որովհետեւ ուրիշի մի փոխ տուած եմ։ Ինքը զինքը անանկ ջատագովելու ատեն, էշը զուգ. ան, ըսաւ գիւղացին, ահաւասիկ քու էշդ կը հաստատէ ուրիշի մի տալդ, շնորհակ խաստաւանիլ պէտք է որ շատ բարեբար ես։ Օրմանալի մարդ մ'ես, պատասխան տուաւ գիւղացին, ինձմէ աւելի իշուն կը հաւատաս։

23. Փոքրիկ տղայ մի օր մի սեղանի վրայ միս ուզելով, հայրը ըսաւ անոր, միս ուզել քեզ չի վայելէր, այլ պէտք է որ համբերես մինչեւ որ տան։ Այս խելոք տղան տեսնելով որ ամէն ալ կուտէին և իրեն բան մի չէին տար, ըսաւ իւր հօրը, հայր իմ, թէ որ կը բարեհաճիք ինձ քիչ մի աղ տուէք։ Ինչ պիտի ընես, հայրը հարցուց անոր, ինձի տալիք մսին հետ ուտելու համար, պատասխանեց տղան։ Հայրը տեսաւ որ փոքրիկ տղան մոռցուած էր, առանց ուզելու մսէն տուաւ անոր։

(Պիտի շարունակուի)։

---

digitised by A.R.A.R.@